ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Մարտի 2-ը 2015 թվականի N 24 - Ա

,,ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ '' ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի ,,Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին'' թիվ 41-Ա որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ,,Արծվաբերդի առողջության կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել ,,Արծվաբերդի առողջության կենտրոն'' անվանումով ,,պետական ոչ առևտրային կազմակերպություն'' կազմակերպա-իրավական ձևի իրավաբանական անձի փոխանցման ակտի հիման վրա, որի գործունեության հիմնական առարկան, նպատակները և ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են բնակչության առողջության պահպանումը, բարելավումը, առողջ ապրելակերպի քարոզչությունը, հիվանդությունների կանխարգելումը, պետության կողմից երաշխավորված բժշկական օգնությունը և սպասարկումը:
2. Հաստատել ,,Արծվաբերդի առողջության կենտրոն'' պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:
3. Մինչև մրցույթով ,,Արծվաբերդի առողջության կենտրոն'' պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը Գագիկ Դալլաբյանին նշանակել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ազատելով ,,Արծվաբերդի առողջության կենտրոն '' փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից:
4. ,,Արծվաբերդի առողջության կենտրոն'' պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ անհրաժեշտ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստր կազմակերպության պետական գրանցման համար:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

Մարտի 2, 2015թ.
ք. Իջևան